# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 70-Լ

«21» 08 2024 թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալի 1 թափուր հաստիքը կրճատելու և ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի 1 հաստիք ավելացնելու, ինչպես նաև ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի վարորդի 1 թափուր հաստիքը կրճատելու և կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդականի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91

հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 10.2-րդ գլխի 36.8-րդ կետի «Վարչության դատախազ 7» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 8» բառերով, իսկ նույն գլխի «**Ընդամենը 13**» բառերը՝ «**Ընդամենը 14**» բառերով,

2) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 11-րդ գլխի 38-րդ կետի «Վարչության պետի տեղակալ 2» բառերը փոխարինել «Վարչության պետի տեղակալ 1» բառերով, իսկ նույն գլխի «**Ընդամենը 9**» բառերը՝ «**Ընդամենը 8**» բառերով,

3) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 2-րդ գլխի 4.1-րդ կետի «Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող 2» բառերը փոխարինել «Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող 3» բառերով, իսկ նույն գլխի «**Ընդամենը 12**» բառերը՝ «**Ընդամենը 13**» բառերով,

4) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 3.3-րդ գլխի 15-րդ կետի «Վարորդ 18» բառերը փոխարինել «Վարորդ 17» բառերով, նույն գլխի «**Ընդամենը 29**» բառերը՝ «**Ընդամենը 28**» բառերով, իսկ «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 42***» բառերը՝ «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 41***» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**